Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ու Թ Յ Ու Ն

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.**

   Եղիշե Կիրակոսյան՝ Միջազգային իրավական հարցերով ներկայացուցիչ

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Նիդերլանդների Թագավորություն, քաղաք Հաագա; 2024թ. փետրվարի 7-9-ը ներառյալ

3. **Հրավիրող կողմը.**
   Կիրառելի չէ

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

   Գործուղման նպատակն էր ՀՀ արտաքին գործերի նախարարի գլխավորած պատվիրակության կազմում մասնակցել ս. թ. փետրվարի 8-ին Միջազգային քրեական դատարանում (Հաագա, Նիդերլանդների Թագավորություն) անցկացվող Հայաստանի Հանրապետության դրոշի բարձրացման հանդիսավոր արարողությանը:

5. **Քննարկված թեմաները.**
   Կիրառելի չէ

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

   2024թ" փետրվարի 1-ից Հայաստանի Հանրապետության համար պաշտոնապես ուժի մեջ է մտել Հռոմի ստատուտը, այսպիսով, Հայաստանը դարձել է Միջազգային քրեական դատարանի 124-րդ մասնակից պետությունը:

   Այդ կապակցությամբ ս. թ. փետրվարի 8-ին Միջազգային քրեական դատարանում տեղի է ունեցել Հայաստանի Հռոմի ստատուտին անդամակցությանը նվիրված պաշտոնական միջոցառումը:

   Միջոցառման մեկնարկին ՄՔԴ նախագահ Պյոտր Հոֆմայսկիի և ՄՔԴ անդամ երկրների համաժողովի նախագահ Պայվի Կաուկորանտայի ներկայությամբ տեղի է ունեցել ՀՀ ԱԳ

նախարար Արարատ Միրզոյանի կողմից Հայաստանի Հանրապետության դրոշի բարձրացման արարողությունը:

Դրոշի բարձրացման արարողությունից հետո ողջույնի և շնորհավորական խոսքով հանդես են եկել ՄՔԴ նախագահ Պյոտր Հոֆմայսկին, ինչպես նաև ՄՔԴ անդամ երկրների համաժողովի նախագահ Պայվի Կաուկորանտային, այնուհետև ելույթ է ունեցել ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը:

Միջոցառմանը մասնակցել են նաև ՄՔԴ գլխավոր դատախազը, Հաագայում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի մի շարք ներկայացուցիչներ՝ շուրջ 60 դիվանագիտական ներկայացուցչություններից, լրագրողների ասոցիացիայի նախագահը, ինչպես նաև այլ հյուրեր:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**
   Կիրառելի չէ

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**
   Կիրառելի չէ

Recoverable Signature

X

Ստորագրությունը, ամսաթիվը: Signed by: KIRAKOSYAN YEGHISHE 2605820416

14 փետրվար 2024թ.